Հավելված 10

<< ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-12/4>> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N << ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-12/4>>

ք. Աբովյան <<_____>>_____20 թ.

<<Սաղաթել՝ Մխիթարյան Արայիկի>> Ա/Ձ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Սաղաթել Մխիթարյանի <<AM0598443, տրվ. 16.01.2012թ, 019-ի կողմից>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է <<Աբովյանի քաղաքային համայնքի>> (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ <<Սննդամթերքի ձեռքբերման>> <<ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-12/4>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին և պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում, ուստի սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրի՝ Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը, կից ներկայացված վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.2. Ընկերության կողմից սույն ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու, չկատարելու կամ կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին՝ վճարելու պահանջագրի մեջ նշված գումարը:

1.3. Պահանջագիրը բանկ ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում Պատվիրատուին գումարը բանկից անկախ պատճառներով չփոխանցվելու դեպքում, Պատվիրատուն Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝